ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/25-ՍՄ-17/1»

ք. Կապան

<<14>> Մարտի 2017թ.

<< Սյունիքի մարզպետարանի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ռ. Սարգսյանի, ով գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Յուքոմ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ. Ասատուրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է հեռախոսակապի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 (քառասուն) օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 18 360 000 (տասնութ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ 2017թ.-ի համար մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 5400000 (հինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում.

1-ին չափաբաժնի մասով մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 12 444 000 (տասներկու միլիոն չորս հարյուր քառասունչորս հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ 2017թ.-ի համար մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 3660000 (երեք միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժնի մասով մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 5916000(հինգ միլիոն ինը հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, իսկ 2017թ.-ի համար մատուցման ենթակա Ծառայության գինը կազմում է 1740000 (մեկ միլիոն յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Սույն պայմանագիրը կնքվում է ընդհանուր՝ 18 360 000 (տասնութ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ արժեքով, սակայն քանի որ նախատեսված են ավելի քիչ միջոցներ, քան պայմանագրի գինն է՝ Ծառայության մնացած մասը կմատուցվի հաջորդող տարիներին միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով: Ծառայության մատուցման համար տվյալ տարվան հաջորդող տարվա ընթացքում միջոցներ չնախատեսվելու դեպքում, այդ մասով պայմանագիրը կլուծվի:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով, ինչպես նաև կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով, կամ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

---

[1] *Տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:*

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ծանուցումն ուղարկում է պայմանագիր կնքած անձի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն ենթակետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից

7.7Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են << դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Սյունիքի մարզպետարանի	<<Յուքոմ>> ՍՊԸ
աշխատակազմ	ք.Երևան,Գ.Լուսավորիչ 9
ք.Կապան, Գ. Նժդեհ 1	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ900311080049	Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 09445375	ՀՎՀՀ 00024873
Երևանի թիվ 1 ԳԲ	Կորպորատիվ վաճառքի բաժնի
Աշխատակազմի ղեկավար	ղեկավար՝ Կ.Ասատուրյան
Ռ. Սարգսյան	
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված 1
«14» Դեկտեմբեր 2017թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/25-ՍՄ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Չափաբաժնի համարը	Ծառայության անվանումը	Տեխնիկական բնութագրի տարրերը	Ձեռքբերվող ծառայության նկարագիր
1	Հեռախոսակապի ծառայություն N1	Տեղային հեռախոսային կապ	1. Օպերատորը պետք է ապահովի բաժանորդի տարածքում գտնվող թվով **13** հատ ներքին հեռախոսների համար ծառայություն. 2. Բաժանորդի համարները պետք է լինեն **13 հատ** 3. Բաժանորդի ներքին համարները պետք է լինեն թվով **13** հատ 4. Օպերատորի կողմից բաժանորդի տարածքում պետք է տեղադրվեն , կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ Սարք-սարքավորումները: 5. Օպերատորը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը(Dual path redundant Service,Backup): 6. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 4(չորս) ժամը: 7. Բաժանորդը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն կառավարել ծառայությունից օգտվողների իրավունքները: 8. Օպերատորի կողմից տրամադրվող համակարգը պետք է հնարավորություն ունենա առանց լրացուցիչ սարքավորումների ապահովել VOIP տեխնոլոգիայի բոլոր հիմնական հատկությունները օր՝ Call Transfer,Forward, Call Parking, Caller ID, Conference Call,IVR,Call Recording,CDR,DISA և այլն...(ըստ պահանջի) 9. Օպերատորը պետք է տրամադրի 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում: 10. Օպերատորը պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը ոչ ուշ, քան Ծառայության մատուցումից 10 աշխատանքային օր առաջ: .Նշված հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա: .Ընդ որում ծառայությունների ամսվավճարը որոշվում է ըստ բաժանորդի փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի:
2	Հեռախոսակապի ծառայություն N2	Միջազգային հեռախոսային կապ	1. Օպերատորը պետք է ապահովի բաժանորդի տարածքում գտնվող թվով **37** հատ արտաքին հեռախոսների համար ծառայություն. 2. Բաժանորդի համարները պետք է լինեն **37 հատ:** 3. Բաժանորդի արտաքին համարները պետք է լինեն թվով **37** հատ , 4. Օպերատորի կողմից բաժանորդի տարածքում պետք է տեղադրվեն , կարգաբերվեն և գործարկվեն բոլոր անհրաժեշտ Սարք-սարքավորումները: 5. Օպերատորը պետք է ապահովի տրամադրվող ծառայության անխափան աշխատանքը(Dual path redundant Service,Backup):

			6. Ծառայությունների մատուցման ամսվա ընթացքում Օպերատորի մեղքով (Օպերատորի ցանցի անսարքությունների հնարավոր անջատումների) առաջացած թերությունների ընդհանուր ժամանակահատվածը, որը հաշվառվում է Օպերատորի անսարքության քարտերի համակարգում, չպետք է գերազանցի ամսական թույլատրելի սահմանաչափը՝ 4(չորս) ժամը: 7. Բաժանորդը պետք է հնարավորություն ունենա ինքնուրույն կառավարել ծառայությունից օգտվողների իրավունքները: 8. Օպերատորի կողմից տրամադրվող համակարգը պետք է հնարավորություն ունենա առանց լրացուցիչ սարքավորումների ապահովել VOIP տեխնոլոգիայի բոլոր հիմնական հատկությունները օր՝ Call Transfer,Forward, Call Parking, Caller ID, Conference Call,IVR,Call Recording,CDR,DISA և այլն...(ըստ պահանջի) 9. Օպերատորը պետք է տրամադրի 24/7 ռեժիմով աշխատող տեխնիկական և ծրագրային առանձնացված օպերատորով սպասարկում: 10. Օպերատորը պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ սարք սարքավորումների տեղադրումը, փորձարկումը, թերությունների վերացումը և համակարգի վերջնական գործարկումը ոչ ուշ, քան Ծառայության մատուցումից 10 աշխատանքային օր առաջ: .Նշված հեռախոսահամարները կարող են ակտիվանալ և ապաակտիվանալ պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա: .Ընդ որում ծառայությունների ամսվավճարը որոշվում է ըստ բաժանորդի փաստացի տրամադրված հեռախոսային ծառայությունների քանակի:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբ	Ավարտ
Պայմանագիր կնքելու օրը	20.12.2017թ.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ
ք.Կապան, Գ. Նժդեհ 1
Հ/Հ900311080049
ՀՎՀՀ 09445375
Երևանի թիվ 1 ԳԲ
Աշխատակազմի ղեկավար
Ռ. Սարգսյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
<<Յուքոմ>> ՍՊԸ
ք.Երևան,Գ.Լուսավորիչ 9
Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100
ՀՎՀՀ 00024873
Կորպորատիվ վաճառքի բաժնի
ղեկավար՝ Կ.Ասատուրյան

(ստորագրություն)

Հավելված 2
<<14>> Դեկտեմբեր 2017թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/25-ՍՍ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել << 2017թ. Պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝												
		Հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը 2017թ.**
1.	**Տեղական հեռախոսակապ**	-	-	366000	1281000	1281000	1281000	2196000	2196000	2196000	3660000	3660000	3660000	**3660000**
2	**Միջազգային հեռախեսակապ**	-	-	174000	609000	609000	609000	1044000	1044000	1044000	1740000	1740000	1740000	**1740000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*
***Վճարումը նախատեսված է 2017թ.-ի համար մատուցվելիք ծառայությունների մասով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<< Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմ
ք.Կապան, Գ. Նժդեհ 1
<//<900311080049
<<Վ<< 09445375
Երևանի թիվ 1 ԳԲ
Աշխատակազմի ղեկավար
Ռ. Սարգսյան

(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
<<Յուքոմ>> ՍՊԸ
ք.Երևան,Գ.Լուսավորիչ 9
Ամերիաբանկ ՓԲԸ
<//< 1570043102134100
<<Վ<< 00024873
Կորպորատիվ վաճառքի բաժնի
ղեկավար՝ Կ.Ա

(ստորագրություն)

Հավելված 3
«14» մարտի 20 թ. կնքված
N ԳԱԿ-ԵՀՕՀԲ-15/25-ՍՄ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
Ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«14» մարտի 20 թ. կնքված
N ԳԱԿ-ՇՀԾՀԲ-15/25-ՍՄ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

Ստորագրություն